ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2017թ. **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ.648-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 6-րդ հարկի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.02082016-01-0176 վկայական) «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամին տրամադրված 109.7 քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել մինչև 2020 թվականի հոկտեմբերի 30-ը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքապետարան է դիմել «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամի հիմնադիր նախագահ Ֆելիքս Բախչինյանը՝ Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 6-րդ հարկի 109.7քմ մակերեսով տարածքի նկատմամբ անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու խնդրանքով:

Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի «Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին» հ.413-Ա որոշման հիման վրա Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 շենքի 6-րդ հարկի 109.7քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2017 թվականի սեպտեմբերի 24-ը ժամկետով, տրամադրվել է «ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամին: Նշված որոշման հիման վրա հիմնադրամի հետ կնքվել է անհատույց օգտագործման պայմանագիր, որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 27.09.2012թ. հ.27092012-01-1673 վկայական/:

«Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամը ստեղծվել է 2002 թվականին: Հիմնադրամի ստեղծման նպատակն անվանի բևեռախույզ, գիտնական, հասարակական գործիչ ու հումանիստ հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի կատարած աշխատանքները լայն հասարակությանը ներկայացնելը և հայանպաստ գործունեության իրականացումն է:

Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալելուց հետո կազմակերպել է Ֆրիտյոֆ Նանսենին նվիրված գիտաժողովներ, կոնֆերանսներ, հայերեն լեզվով հրատարակել է Նանսենի աշխատությունները 8 հատորով և վերջինիս նվիրված մենագրություններ՝ 12 հատորով: Այս հիմնադրամը հայապահպանության գործում շատ լուրջ դերակատարում է ունենում ոչ միայն Հայաստանում, այլ նաև նրա սահմաններից դուրս:

Հաշվի առնելով կազմակերպության գործունեության համար համապատասխան աշխատանքային պայմանների ապահովման անհրաժշտությունը մշակվել է Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ